VEOLIA
Ջուր

ՄԱՐՏ 2024

# ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ

Երևան 2024

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ ..... 3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում ..... 3
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում ..... 6
1.3. Ջրահեռացման համակարգ ..... 7
1.4 Կեղտաջրերի մաքրում և հեռացում ..... 8
1.5 Էներգահամակարգ ..... 8

2. Առևտրային տնօրինություն ..... 9
2.1. Բաժանորդների տվյալներ ..... 9
2.2. Հաստույթ ..... 10
2.3. Գանձում ..... 11
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/ ..... 11
2.5. Ջրաչափեր ..... 12
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում ..... 13

3. Տեխնիկական տնօրինություն ..... 14
3.1. Ջրամատակարարման շարունակականություն ..... 14
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում ..... 15
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ ..... 17
3.4. Ջրատար համակարգի բարելավում ..... 18
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն ..... 18
3.6. 1-85 թեժ գիծ ..... 19

4. Լրատվական ծառայություն ..... 20

5. Որակի, առողջության և անվտանգության բաժին ..... 22
5.1. Դասընթացներ/սեմինարներ ..... 22
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում ..... 24
5.3 Արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ ..... 24
5.4. Վեոլիա Գրուպի ԲՌԿ ստանդարտների ինքնագնահատման, ընկերության համակարգում ներդրման, նոր ԲՌԿ ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքներ ..... 24
5.5. ԱՊՄ-ների և ԿՄՊ-ների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ ..... 25
5.6. Համագործակցություն ՀՀ ՆԳ նախարարության և ՀՀ մարզպետարանների հետ ..... 25
5.7 Վեոլիա Գրուպի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ միջև կնքված Առողջության և անվտանգության պայմանագիր..... 25

# ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում Վեղիա Ընկերության սպասարկման տարածքում իրականացվել են վթարա-որոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝

### Վայոց ձորի մարզ

- «Վայք» տեղամասի աշխատակիցների կողմից Վայք քաղաքի Արշավիր Մելիքյան 1 շենքի և Արշավիր Մելիքյան 1 առանձնատան համար կառուցվել է նոր d=32-63մմ L=281գծմ պէթ խողովակներով ջրագիծ, տեղադրվել է թվով 1 d=25մմ փական:

### Արարատի մարզ

- «Արտաշատ» տեղամաս. Արաքսավան բնակավայրի Հ.Շիրազ, Պ.Սևակ, Ա.Խաչատրյան, Ե.Չարենց, Վ.Սարգսյան, Կոմիտաս, Ջրանցքի, Կ.Դեմիրճյան և Գ.Նժդեհ փողոցների ջրագծերը կառուցվել են 2000-ական թվականներին՝ ՊԷԹ d=50-110մմ անորակ, ստանդարտին չհամապատասխանող խողովակներով, որոնք գտնվում էին քայքայված, վթարային վիճակում: Արաքսավան բնակավայրը սնող թուջե մետաղական d=50-150մմ ջրագծերը՝ 1960-ական թվականներին կառուցված, նույնպես գտնվում էին քայքայված, վթարային վիճակում: Հաճախակի առաջացած վթարները բերում էին ջրի պղտորվածության, ճնշման անկման տեղիք տալով բաժանորդների կողմից հաճախակի կրկնվող բողոքների: Վերոնշյալ փողոցների ջրագծերը պիտանի չէին հետագա շահագործման համար, ուստի անհրաժեշտությունից ելնելով աշխատակիցների կողմից իրականացվել է Արաքսավան բնակավայրը սնող և ներքին ցանցի ջրագծերի վերակառուցման աշխատանքներ՝ d=20-160մմ խողովակներով L=7522գծմ: Արաքսավան բնակավայրի նշված փողոցների և սնող ջրագծերի վերակառուցման ընթացքում իրականացվել են հետևյալ ծավալներով աշխատանքներ՝

- խողովակների մոնտաժում- 6337գծմ
- պէթ խողովակ- d=20-75մմ L=155-300գծմ
- ջրաչափական դիտահորերի տեղադրում - թվով 140
- d=15մմ ջրաչափերի տեղադրում - թվով 125
- ջրաչափական սարքերի տեղափոխում սահմանազատման կետ- թվով 12
- ե/բ դիտահորերի և ծածկերի տեղադրում -թվով 12:

Կատարված աշխատանքների արդյունքում բարելավել է մատակարարվող խմելու ջրի որակը, վերացվել են ջրակորուստները, տնտեսվել է մոտ 4լ/վրկ ջրաքանակ, շահագործումից հանվել են d=20-150մմ թուջե, մետաղական և պէթ վթարային վիճակում գտնվող L=7522գծմ ջրագծերը, որը Արաքսավան բնակավայրում բերել է ջրի ճնշման բարձրացման, կորուստների կրճատման, հասույթի աճի:

## Գ. Լանջիկ

Թալին տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Չլկաններ ջրաղբյուրի սեզոնային երևույթների, ջրաքանակի կտրուկ նվազման և դրանով պայմանավորված ջրամատակարարման խնդիրների առաջացման հետ կապված՝ Լանջիկ, Քարաբերդ և Ձիթհանքով գյուղերին այլընտրանքային ջրամատակարարման տարբերակ ընտրվեց նախկինում շահագործված և տասնամյակներով չշահագործվող Մարալիկի ՕԿՋ-ից դեպի Լանջիկի մարիչ հոր D-500-300մմ L-8.2կմ պողպատե ջրագծի գործարկումը: Տեղադրվեց նոր պոմպ, կատարվեց ջրի մղում պոմպով, ջրագծի լվացման և քլորացման աշխատանքներ: Թալին և Արթիկ ՇՏ-երի աշխատակիցների հետ համատեղ հայտնաբերվեց թվով 3 խոշոր վթար Q=15-30 լ/վ արտահոսքով, խցափակվեցին մի քանի չգործող միացումներ D-50-150մմ: Արդյունքում, պոմպակայանից հաջողվեց մղել շուրջ Q=35լ/վ ջուր, հետագայում դարձնելով այն Q=15լ/վ պահանջված ջրաքանակի՝ ապահովելով տվյալ բնակավայրերին կայուն ջրամատակարարմամբ:



## Ք. Գյումրի

Գյումրի քաղաքի Անի թաղամասում նոր անցկացված ջրագծերի միացման, փոխկապակցման հետ զուգահեռ Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրվեց, հայտնաբերվեցին մի քանի կորած դիտահորեր փականային հանգույցներով, և խցափակման արդյունքում շահագործումից հանվեցին թաղամասի մի հատվածի հին ջրամատակարարման ցանցի ջրագծերը, մասնավորապես Մ. Խորենացի փողոցը, Չարենցի փողոցից մինչև Տ.Ճարտարապետ փողոց, 5-րդ փողոցով պարփակված տարածքը: Արդյուքում, քայքայված D-150-300մմ ջրագծերի վրա ընդհանուր չափված ջրաքանակներով, խցափակումից հետո խնայվեց մոտ 6 լ/վ ջրաքանակ:



## Ք. Երևան

Արաբկիր ՇՏ-ի հետ իրականացված վթարա-որոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար քաղաք Եղվարդ Գայի փողոց 41 հասցեի հարևանությամբ անցնող D = 100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 3լ/վ ջրաքանակ:

Էրեբունի ՇՏ-ի աշխատակիցների հետ համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Խաչիկ Դաշտենց փողոցով անցնող Գառնու D=700մմ ջրատարի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=8լ/վ ջրաքանակ:

Էրեբունի ՇՏ-ի աշխատակիցների հետ համատեղ Նոր Արեշ 31-րդ փողոցում տեսախցիկ սարքով իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց նոր D=63մմ ՊԷ ջրագծի կապը հին, քայքայված ջրագծի հետ: Խցափակումից հետո տնտեսվեց Q=5լ/վ ջրաքանակ:



Մաշտոց ՇՏ-ի աշխատակիցների հետ համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Մազմանյան-Շիրազ փողոցների խաչմերուկում, դիտահորի մեջ, D=400մմ ՊԷ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=9լ/վ ջրաքանակ:

Մաշտոց ՇՏ-ի աշխատակիցների հետ համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Ֆուչիկի 25/1 շենքի դիմաց, D=200մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=5լ/վ ջրաքանակ:



Շահումյան ՇՏ-ի աշխատակիցների հետ համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Բաբաջանյան 10 շենքի մոտ, D=200մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 5լ/վ ջրաքանակ:

Մարտ ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

*Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր*

| Կատարված աշխատանքները | Չափման միավոր | Քանակ |
|---|---|---|
| Չափում հոսքաչափով | տեղ | 827 |
| Որոնում խողովակափնտրիչ սարքով | մ | 17953 |
| Հոսակորուստի որոնում ակվաֆոնով | մ | 17315 |
| Հոսակորուստի որոնում կորելյատորով | մ | 910 |
| Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում | հատ | 0 |
| Շահագործումից հանված ջրագիծ | մ | 1665 |
| Կառուցված ջրագիծ | մ | 7521.5 |
| Կառուցված կոյուղագիծ | մ | 453 |
| Վերացված գաղտնի վթարներ | հատ | 9 |
| Փոխարինված փական | հատ | 184 |
| Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց | հատ | 490 |
| Մաքրված դիտահոր | հատ | 1964 |
| Գաղտնի վթաների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ | լ/վ | 6.1 |
| *Վերացված վթարներ* | *Չափման միավոր* | *Քանակ* |
| Ջրամատակարարման ցանցում | հատ | 961 |
| Ջրահեռացման ցանցում | հատ | 1366 |
| Պոմպակայաններում | հատ | 0 |
| Մաքրված անձրևընդունիչ | հատ | 0 |

Մարտ ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

*Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր*

| | Պոլիէթիլենային խողովակներ (հատ) | Մետաղական խողովակներ (հատ) | Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ |
|---|---|---|---|
| Ընդամենը | 851 | 749 | 1075 |

## 1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է մարտ ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

*Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր*

| Կատարված աշխատանքներ | Ջրաչափի տրամագիծ, մմ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 15 | 20 | 25 | 30 | 32 | 40 | 50 | 65 | 80 | 100 | Ընդամենը |
| Տեղադրված | 234 | 4 | 2 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 240 |
| Փոխարինված | 409 | 13 | 5 | 0 | 8 | 4 | 19 | 0 | 4 | 2 | 464 |
| Տեղափոխված | | | | | | | | | | | 0 |
| Տեխ. ակտ | 204 | 6 | 1 | 0 | 1 | 4 | 3 | 0 | 1 | 0 | 220 |
| Ընդամենը | 847 | 23 | 8 | 0 | 9 | 8 | 22 | 0 | 5 | 2 | 924 |

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 924 ջրաչափ: Կատարված աշխատանքների 92%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

## 1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարտ ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 4-ում:

*Աղյուսակ 4. Աշխատանքների հակիճ նկարագիր*

| հ/հ | Տեղամասի անվանումը | Կոյուղագծերի լվացում մ | Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ | Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ |
|---|---|---|---|---|
| 1 | Արաբկիր | 900 | 311 | 8 |
| 2 | Քանաքեռ-Զեյթուն | 0 | 276 | 1 |
| 3 | Մաշտոց | 0 | 252 | 25 |
| 4 | Շահումյան | 0 | 258 | 32 |
| 5 | Շիրակ | 2335 | 423 | 21 |
| 6 | Արթիկ | 0 | 76 | 30 |
| 7 | Ապարան | 0 | 96 | 0 |
| 8 | Ալավերդի | 910 | 37 | 30 |
| 9 | Աշոցք | 0 | 4 | 0 |
| 10 | Բերդ | 230 | 20 | 0 |
| 11 | Իջևան | 0 | 46 | 711 |
| 12 | Լոռի | 0 | 219 | 3 |
| 13 | Նոյեմբերյան | 110 | 10 | 48 |
| 14 | Սպիտակ | 0 | 18 | 0 |
| 15 | Ստեփանավան | 1735 | 23 | 0 |
| 16 | Թալին | 0 | 9 | 0 |
| 17 | Տաշիր | 0 | 8 | 0 |
| 18 | Չարենցավան | 0 | 94 | 0 |
| 19 | Աբովյան | 40 | 95 | 48 |
| 20 | Հրազդան | 0 | 78 | 36 |
| 21 | Կենտրոն | 370 | 282 | 0 |
| 22 | Հյուսիս | 110 | 278 | 54 |
| 23 | Հարավ | 0 | 343 | 0 |
| 24 | Էրեբունի | 0 | 175 | 0 |
| 25 | Արմավիր | 0 | 153 | 0 |
| 26 | Արտաշատ | 0 | 150 | 0 |
| 27 | Էջմիածին | 0 | 174 | 0 |
| 28 | Աշտարակ | 2620 | 41 | 43 |
| 29 | Արարատ | 0 | 71 | 43 |
| 30 | Մասիս | 80 | 59 | 78 |
| 31 | Գավառ | 290 | 43 | 0 |
| 32 | Սևան | 590 | 66 | 5 |
| 33 | Մարտունի | 0 | 35 | 0 |
| 34 | Վարդենիս | 0 | 5 | 0 |
| 35 | Ճամբարակ | 0 | 28 | 0 |
| 36 | Դիլիջան | 120 | 49 | 82 |
| 37 | Վայք | 500 | 22 | 0 |
| 38 | Եղեգնաձոր | 80 | 18 | 0 |
| 39 | Ջերմուկ | 0 | 39 | 0 |
| 40 | Սիսիան | 0 | 34 | 0 |
| 41 | Գորիս | 0 | 50 | 3 |
| 42 | Կապան | 1111 | 70 | 27 |
| 43 | Մեղրի | 580 | 65 | 0 |
| | Ընդամենը | 12711 | 4603 | 1328 |

## 1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում գտնվող պոմպակայանի Homa մակնիշի 22 կվտ հզորությամբ պոմպերից մեկը դադարել էր աշխատել: Պոմպը հորից դուրս բերելուց և զննելուց հետո պարզվեց, որ բոլոր առանցքակալները շարքից դուրս են եկել: Արդյունքում փոխարինվեցին բոլոր առանցքակալները, և պոմպը կրկին տեղադրվեց: Այժմ պոմպակայանը գործում է բնականոն ռեժիմով:
- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանի ենթակայանում այրվել էին բարձր լարման ապահովիչները, որոնք փոխարինվեցին նորերով, և այժմ պոմպակայանը գործում է բնականոն ռեժիմով:
- Մարտունու կեղտաջրերի մաքրման կայանը ամբողջությամբ հոսանքազրկվել էր: Զննության արդյունքում պարզվեց, որ այրվել էին բարձր լարման ապահովիչները, իսկ բարձր լարման բաժանիչը չէր աշխատում: Արդյունքում դադարեցվեց էլեկտրասնուցումը, վերանորոգվեց բարձր լարման բաժանիչը, և ապահովիչները փոխարինվեցին նորերով:
- Գավառի կեղտաջրերի մաքրման կայանում խոշոր մասնիկների մամլիչը դադարել էր աշխատել: Զննման արդյունքում պարզվեց, որ ռեդուկտորի խցուկը շարքից դուրս էր եկել, և յուղն ամբողջությամբ թափվել էր, ինչի հետևանքով այն դադարել էր աշխատել: Արդյունքում փոխարինվեց խցուկը, լցվեց նոր յուղ, և այժմ բոլոր սարքավորումները գործում են բնականոն ռեժիմով:
- Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

*Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր*

| հ/հ | Գտնվելու վայրը | Կառույցի անվանումը | Մղված կեղտաջրերի ծավալը մ³ | Մաքրված կեղտաջրերի ծավալը մ³ | Կեղտաջրից առանձնացած կեղտ տ |
|---|---|---|---|---|---|
| 1 | ք. Գավառ | «Գավառ» ԿՄԿ | 0 | 62,959 | 10,8 |
| 2 | ք. Մարտունի | «Մարտունի» ԿՄԿ | 0 | 55,318 | 18 |
| 3 | ք. Վարդենիս | «Վարդենիս» ԿՄԿ | 0 | 170,098 | 5,4 |
| 4 | ք. Ջերմուկ | «Ջերմուկ» ԿՄԿ | 0 | 71,969 | 5,4 |
| 5 | ք. Դիլիջան | «Դիլիջան» ԿՄԿ | 0 | 117,545 | 27 |
| 6 | ք. Սևան | «Սևանի» N3 պ/կ | 16,361 | 0 | 0 |
| 7 | ք. Սևան | «Սևանի» N5 պ/կ | 14,150 | 0 | 0 |
| 8 | ք. Գավառ | «Գավառ» պ/կ | 12,900 | 0 | 0 |
| 9 | ք. Վարդենիս | «Վարդենիս» պ/կ | 6,300 | 0 | 0 |
| 10 | ք. Ջերմուկ | «Ջերմուկ» պ/կ | 0 | 0 | 0 |

## 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 343 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 339 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

# ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.04.2024 թվականի դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 618,592 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ | 2024թ. մարտ ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ | Կնքված պայմանագրերի քանակը | % |
|---|---|---|---|---|
| Առևտրային | Բնակիչ-բաժանորդ | 677,922 | 589,037 | 87,7 |
| | Իրավաբանական անձ | 32,787 | 29,555 | 90,1 |

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ | Բաժանորդների ընդհանուր քանակ | Ծախսող բաժանորդների քանակ | % |
|---|---|---|---|---|
| Առևտրային | Բնակիչ-բաժանորդ | 749,440 | 599,893 | 80,0 |
| | Իրավաբանական անձ | 38,317 | 27,861 | 72,7 |

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:
Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 1131 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ

Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում անսարք ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակագ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին՝ ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:
Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:
Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Մարտ ամսվա ընթացքում ստուգաչափվել է 5796 ջրաչափ:

| Տնօրինություն | Սպառողներ | Սարքին | Անսարք | Միջամտած | Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 02.2024 |
|---|---|---|---|---|---|
| Առևտրային | Բնակիչ-բաժանորդ | 3192 | 1744 | 439 | 5375 |
| | Իրավաբանական անձ | 282 | 99 | 40 | 421 |
| | Ընդամենը | 3474 | 1843 | 479 | 5796 |

Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ մարտ ամսին փոխարինված 5796 ջրաչափերի մոտ 40 %-ը (կամ 2322 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:
Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:
Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 266,646 մ³ հասույթ:
Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2024թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

*Ստուգաչափված ջրաչափ*




*Հասույթ*



## 2.3 ԳԱՆՁՈՒՄ

Մարտ ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,495 մլն. դրամ (95 %):
Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:
Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված՝ անհատական ջրամատակարարման դադարեցումներ:
Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

## 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը:
Մարտ ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 159 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 20.7 մլն դրամ ընդհանուր գումարով:
Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

| Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական | | Բավարարված | | Մերժված | | 2017-2024թթ. ընթացիկ որոշներ | | ԴԱՀԿ ներկայացված գործեր | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար |
| 30,864 | 4,209,805,755 | 18,758 | 2,144,970,374 | 959 | 218,837,133 | 12,115 | 2,068,898,201 | 11,925 | 1,415,301,929 |

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 61 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 3 %-ը՝ մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

| Տնօրինություն | Պարտքը 01.04.2024թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ) | Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Առևտրային, այդ թվում | 11,363 | 2,443 |
| Բնակիչ-բաժանորդներ | 8,017 | 1,689 |
| Իրավաբանական անձեր | 3,346 | 754 |

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 403.4 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

*2024 թ.դեբիտորական պարտքերի շարժը / մլն.դրամ (Մարզեր)*

## 2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.04.2024թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ | Բնակիչ-բաժանորդներ | | | Իրավաբանական | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | Այդ թվում ծախսող | % | Ընդամենը | Այդ թվում ծախսող | % |
| Առևտրային | Ջրաչափով | 720,450 | 598,897 | 83.13 | 37,275 | 27,851 | 74.72 |
| | Առանց ջրաչափի | 28,990 | 996 | 344 | 1,042 | 10 | 0.96 |

Տվյալների բազայում 01.04.2024թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

| Տնօրինություն | Բնակիչ-բաժանորդներ | | | Իրավաբանական | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Գործող ջրաչափերի քանակը | Այդ թվում ժամկետանց | % | Գործող ջրաչափերի քանակը | Այդ թվում ժամկետանց | % |
| Առևտրային | 891,498 | 385,413 | 43.23 | 40,742 | 6,662 | 16.35 |

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:
Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 5555 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 783 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:
Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

*ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր*

| Հասցե | Ջրաչափերի ընդհանուր քանակ | Տեղադրված ջրաչափերի քանակ | % |
|---|---|---|---|
| գ.Քասախ | 2479 | 2040 | 81.9 |
| գ.Պռոշյան | 1716 | 1125 | 66.5 |
| ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ. | 6025 | 1968 | 32.4 |

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:
Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է՝ Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 18806, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 17622, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 4879, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5669, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2798, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4725 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝8187 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները:
Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրազրկում իրականացնելու նպատակով:
Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

| Տնօրինություն | Քանակ | Խ.մ. | Գումար (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| Առևտրային | 409 | 161,605 | 29,180,634 |

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

## 3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի մարտ ամսվա շարունակականության տվյալը, որը կազմում է 96.3%, ինչը 0.5%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ: Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

*Ջրամատակարարման շարունակականություն Երևան*




| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 0 | 1 | | | | | | | | | | | |
| 2022 | 96.4% | 96.5% | 97.1% | 97.1% | 97.0% | 96.8% | 96.6% | 96.9% | 97.1% | 96.8% | 96.7% | 96.5% |
| 2023 | 96.6% | 96.5% | 96.8% | 96.8% | 96.7% | 96.6% | 96.3% | 96.3% | 96.6% | 96.8% | 96.7% | 96.5% |
| 2024 | 96.4% | 96.3% | 96.3% | | | | | | | | | |

Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 44 ՃԿՓ-ներ:
Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների ցանկը և դրանց գրաֆիկներից մի քանիսը՝





Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2024թ-ի մարտ ամսին 2023թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 188 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար էլ. էներգիայի ծախսը նվազել է 38 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:




| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երևան - ջրարտադ. ա/կ-ներ (հազ.կվտ)- 2023թ. | 1046 | 1068 | 1217 | 1293 | 2243 | 3775 | 4961 | 5120 | 2924 | 1398 | 1209 | 1161 |
| Երևան - ջրարտադ. ա/կ-ներ (հազ.կվտ)- 2024թ. | 1060 | 1052 | 1178 | | | | | | | | | |
| Երևան - ինքնահոս ջրաքանակ (լ/վ)- 2023թ. | 5200 | 5151 | 5122 | 5056 | 4937 | 4906 | 4871 | 4985 | 5101 | 5182 | 5068 | 5012 |
| Երևան - ինքնահոս ջրաքանակ (լ/վ)- 2024թ. | 4950 | 5003 | 4935 | | | | | | | | | |

## 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլեկտրաէներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 40131 կՎտ.ժ (7,55%), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 9 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 9 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 3541 կՎտ/ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը՝ կնվազեր 43672 կՎտ/ժ:

*Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)*




| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2022 | 544,944 | 464,284 | 504,438 | 449,351 | 453,844 | 451,393 | 492,966 | 492,856 | 453,688 | 461,341 | 474,992 | 508,770 |
| 2023 | 518,813 | 472,624 | 531,594 | 447,638 | 450,529 | 448,404 | 486,562 | 506,247 | 462,387 | 466,606 | 462,952 | 516,505 |
| 2024 | 517,370 | 478,389 | 491,463 | | | | | | | | | |

### Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել են 128 էլ. հաշվիչներ: Ջնվել է 6 նոր ընդունվող պոմպակայան: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՈՒՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչում) և ՕԱՇ (օր առաջ շուկա) կատարվել է առևտրային գործընթաց, որի արդյունքում տնտեսվել է համապատասխանաբար 9,885,873 ՀՀ դրամ (առանձ ԱԱՀ) և 1,733,404 ՀՀ դրամ (առանձ ԱԱՀ): Կատարվել է էլ. Էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

### Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 25 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 21 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 343 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 339 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

### Ինվերտորների տեղադրում

- Հաշվետու ամսում երեք հասցեներում տեղադրվել է ինվերտորային համակարգ.
- Զովունի պոմպակայան (Ma-35)
- Էրեբունի 23 (Er-6)
- Մանթաշյան 51(She-67)

### Ինվերտորային պոմպի տեղադրում

- Հաշվետու ամսում ութ հասցեում տեղադրվել է ինվերտորային պոմպ.
- Չեխովի 31 (She-23)
- Ա -3 թաղ. 30,34,46 շ. (Sh-31)
- Ազատամուտ աղբ.խ.հ (Ij-10)
- Համբարձումյան (Գայդար) 97 (Ar-28)
- Սունդուկյան 17 (Ar-72)
- Հովոնիսյան 119 (She-131)
- Ֆրունզե 6/1, 6/2 (She-112)
- Տիչինա 34 շ. (Sh-7)

Տեղադրված ընդհանուր 127 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 35279 կՎտ/ժ-ով՝ 13%-ով:




| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2022 | 283,18 | 254,32 | 277,34 | 272,73 | 276,30 | 276,21 | 305,19 | 302,06 | 290,16 | 283,63 | 269,33 | 274,00 |
| 2023 | 274,70 | 252,85 | 276,11 | 264,39 | 278,54 | 273,68 | 297,89 | 299,67 | 274,43 | 268,01 | 248,46 | 258,48 |
| 2024 | 255,01 | 235,08 | 240,83 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

### Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

Հաշվետու ժամանակահատվածում 26 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

### Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան

2024թ. մարտ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 34070 կՎտ/ժամ (2,87%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա*




| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2022 | 1110.0 | 947.1 | 950.6 | 1324.0 | 1552.0 | 4093.0 | 4995.0 | 4767.0 | 3055.0 | 1579.0 | 1001.0 | 871.0 |
| 2023 | 1090.0 | 1107.0 | 1188.0 | 1310.0 | 2331.0 | 3903.0 | 5168.0 | 5379.0 | 3010.0 | 1441.0 | 1247.0 | 1212.0 |
| 2024 | 1,097 | 1,079 | 1,222 | | | | | | | | | |

Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 7,454 ԿՎտ/ժ/ամիս կամ 0,59 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա*

| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2022 | 2,200.00 | 1,768.40 | 1,810.60 | 1,811.30 | 1,862.40 | 2,171.90 | 2,952.70 | 3,133.90 | 2,454.50 | 1,944.80 | 1,636.40 | 1,708.00 |
| 2023 | 1,820.60 | 1,698.50 | 1,789.10 | 1,669.80 | 2,000.30 | 2,360.90 | 2,868.60 | 3,163.80 | 2,485.60 | 2,096.50 | 1,862.20 | 1,860.20 |
| 2024 | 1,850.40 | 1,688.50 | 1,796.50 | | | | | | | | | |

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան

- Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 19,605 ԿՎտ/ժամ 0,47%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան*




## 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են մարտ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

| *Աշխատանքի անվանում* | *Չ/Մ* | *Քանակ* |
|---|---|---|
| Զորակապ, Թավշուտ, Զովունի, Ստեփանավան համայնքների կատարողական գծագրերի թվայնացում | համայնք | 4 |
| Հաղթանակ թաղամասի ջրագծերի թվայնացում կատարողական նախագծի հիման վրա | թարմացում | 1 |
| Արթիկ քաղաքի ջրագծերի և Արտաշավան_Աշտարակ ջրատարի ուղղում՝ «Գոտիավորման» բաժնի կողմից տրված տեղեկատվության հիման վրա | ջրատար | 2 |
| Կապան քաղաքի բաժանորդ կետերի տեղադիրքի ուղղում «ԱՏՀ» բազայում առկա տեղեկատվության հիման վրա | քաղաք | 1 |
| Վանաձոր քաղաքի «ԱՏՀ» հասցեների բազայի համալրում և լրացում OSM-ի տեղեկատվության հիման վրա | քաղաք | 1 |
| SCADA համակարգում առկա կետային տեղեկատվություն տեղորոշում և համապատասխանեցում «ԱՏՀ» բազային | SCADA –ին համապատաս-խանեցում | 1 |
| ՃԿՓ-ների, հոսքաչափերի տվյալների բազայի թարմացում | թարմացում | 1 |
| Տեղամասից բերված տվյալների հիման վրա կատարվել է ջրագծերի (1643 մ), կետային տեղեկատվության (8 հատ) թվայնացում, թարմացում և ուղղում | թարմացում | 1 |
| Ագարակ, Ապարան, Արարատ, Արմավիր, Արթիկ, Մեղրի, Սիսիան և Ստեփանավան քաղաքների ջրամատակարարման ցանցի հիդրավլիկ մոդելների կազմում | քաղաք | 8 |
| Գյումրի քաղաքի Շիրակացու, Կամոյի, Իսահակյան, Գործարանային և հարակից փողոցների կոյուղագծերի ուղղում և թարմացում | թարմացում | 1 |
| 157 տեխնիկական պայմանների թվայնացում (284 բաժանորդ) | Տեխ.պայման | 157 |
| «ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը կազմում է 2771 կմ | կմ | 2771 |
| «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում, բազայում նոր կետերի ավելացում /իրավաբանական/ | կետեր | 17 |
| «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում, բազայում նոր կետերի ավելացում /ֆիզիկական/ | կետեր | 1242 |
| «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում, բազայում նոր կետերի ուղղում /ֆիզիկական/ | կետեր | 1390 |
| «ԱՏՀ»-ում առկա մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը կազմում է 9562 կմ | կմ | 9562 |
| «ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը կազմում է 1851 կմ | Կմ | 1851 |
| ԱՏՀ»-ում առկա մարզային կոյուղու երկարությունը կազմում է 1858 կմ | կմ | 1858 |

## 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գառնի սանիտարական գոտում՝ պոմպակայանի մոտ, կառուցվեց մոտ 40մ d=250մմ պոլիէթիլենային խողովակաշար, որը ջրթող փականից բարձրացվեց ≈ 20մ բարձրության վրա: Այն հնարավորություն կտա N4 և N5 պոմպերի գործարկման կամ անջատման ժամանակ պոմպերի մուտքի ջրաքանակների ավտոմատ կարգավորման:

- Արզնի 2 ջրատարի վրա առաջացել էր վթար ≈ 500լ/վ մեծությամբ, որը առաջացել էր հողերի հոսքի պատճառով:

- Ծարավաղբյուր ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվեց վթար 30լ/վ մեծությամբ: Կազմակերպվեց ջրատարի կանգառ և վթարը վերացվեց «Կենտրոն» ՇՏ ուժերով:

## 3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում «Ջրառ» ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Քաղաք Երևան, «Արզնի» քլորակայանում երկրորդ սենսորի միացման նպատակով կարգի է բերվել հեղուկ քլորի անվտանգության համակարգը (սիգնալիզատոր):

- Քաղաք Իջևան, «Գառնի» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած վակուում կարգավորիչը փոխարինվել է վերանորոգված վակուումով, ինժեկտորը փոխարինվել է նորով և վերանորոգվել է դոզատորը:



- Քաղաք Եղեգնաձոր, «Գետափ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի քլորաջրի շարքից դուրս եկած խողովակը փոխարինվել է նորով:

- Քաղաք Դիլիջան, «Գոլովինո» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի վակուում կարգավորիչը:

■ Քաղաք Գյումրի, «Վարդբաղ» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար հեղուկ քլորի համակարգի 1000գ/ժ արտադրողականությամբ դոզատորը փոխարինվել է 100գ/ժ արտադրողականությամբ նոր դոզատորով:

■ Քաղաք Երևան, Ավան-Առինջ տեղամասում վերանորոգվել են հեղուկ քլորի համակարգի երկու վակուում կարգավորիչներ:



■ Քաղաք Գառնի, «Օզոնակայան» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի վակուում կարգավորիչի հնամաշ ֆիքսատորը փոխարինվել է նորով:

■ «Չանախչի» ՋՄԿ-ում ոչ բարվոք վիճակում գտնվող սենյակը վերանորոգվել է տեղի անձնակազմի ջանքերով:

## 3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

■ Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 46497 զանգ:

■ Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 13050 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 10632 զանգ (81,5%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2418 զանգ (18,5%):

■ Շահագործման վերաբերյալ ստացվել է 33447 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 24887 զանգ (74,4%), իսկ մարզերինը՝ 8560 զանգ (25,6%):

■ 2023թ. մարտ ամսվա համեմատ՝ 2024թ մարտ ամսին 19,68%-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը՝ 10,95%-ով:

■ 2023թ. մարտի համեմատ՝ 2024թ. մարտ ամսին 8%-ով նվազել է ֆիքսված զանգերի քանակը, 9%-ով նվազել է՝ 5 րոպեից ավել զանգերի քանակը և 8%-ով՝ հայտարարությունների լուսմ ավտոմատ ծառայության միջոցով:

### Ջրամատակարարման գրաֆիկի բողոքներ

■ 2023թ. մարտի համեմատ՝ 2024թ. մարտ ամսին 10,84%-ով ավելացել է ջրամատակարարման զանգերի քանակը:

■ 2023թ. մարտի համեմատ՝ 2024թ. մարտ ամսին 56% ավելացել է հետ զանգով սպասարկված զանգերի քանակը:

■ 2023թ. մարտ ամսին կատարվել է 19166 հետզանգ, իսկ հաշվետու ամսվա ընթացքում՝ 29853 հետզանգ



*185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր*

| | Ստորաբաժանում | 2023 Մարտ | 2024 Մարտ | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| Առևտրային | Ընդամենը | **10904** | **13050** | 19.68% |
| | Երևան | 8371 | 10632 | 27.01% |
| | Մարզեր | 2533 | 2418 | -4.54% |
| Շահագործում | Շահագործում | 30145 | 33447 | 10.95% |
| | Երևան | 23804 | 24887 | 4.55% |
| | Արաբկիր | 4562 | 4936 | 8.20% |
| | Քանաքեռ-Զեյթուն | 2094 | 1814 | -13.37% |
| | Մաշտոց | 4879 | 2639 | -45.91% |
| | Շահումյան | 2621 | 2791 | 6.49% |
| | Շենգավիթ | 3214 | 4166 | 29.62% |
| | Կենտրոն | 2727 | 5371 | 96.96% |
| | Հյուսիս/Ավան Նոր Նորք/ | 1801 | 1521 | -15.55% |
| | Էրեբունի | 1906 | 1649 | -13.48% |
| | այդ թվում կոյուղու վթար | 130 | 176 | 35.38% |
| | այդ թվում դիտահորի խցանում | 5291 | 6509 | 23.02% |
| | ՄԱՐԶԵՐ | 6341 | 8560 | 34.99% |
| | Հարավ | 3210 | 4812 | 49.91% |
| | Հյուսիս | 3131 | 3748 | 19.71% |
| | այդ թվում կոյուղու վթար | 49 | 774 | 1479.59% |
| | այդ թվում դիտահորի խցանում | 2907 | 3007 | 3.41% |
| | Ընդամենը | **41049** | **46497** | 13.27% |

# ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ամիսը Վեոլիաթիմի համար սկսվեց համակարգում արտակարգ պատահարով: Կորեայի ձորում ժայռաբեկորների թափման, Հրազդան գետի հունի փոխվելու հետևանքով «Արզնի 2-Երևան» մայրուղային ջրատարը հայտնվել էր գետի մեջ և հերթական անգամ վթարվել: Դեպքը տեղի էր ունեցել գիշերը և այդ պահից սկսած էլ Վեոլիաթիմը աշխատեց վթարի վայրում: Առավոտյան արդեն, Հանրային կապերի ծառայությունը լրատվամիջոցներին ուղարկեց 2 մամուլի հաղորդագրություն՝ լուսանկարներով բացատրելով վթարի պատճառներն ու վթարավերացման բարդությունները: Դրանից բացի, Ընկերության ֆեյսբուքյան էջում ՀԿԾ-ը թեմային անդրադարձավ 5 անգամ՝ պարբերաբար հանրությանը տեղյակ պահելով աշխատանքների ընթացքից: Կենտրոն, Ֆրի նյուզ և ATV հեռուստաալիքների հետ կազմակերպվեցին ռեպորտաժներ, որոնք վթարի վայրից ներկայացրեցին գործի բարդությունն ու դժվարությունները: Հանրային կապերի ծառայության համակարգված աշխատանքի արդյունքում այդ օրերին լրատվամիջոցների կողմից որևէ քննադատական ալիք չնկատվեց:

Մարտը «Վեոլիա ջուր» ընկերության գործունեության լուսաբանման առումով շատ արդյունավետ էր: Ընկերության սոցիալական էջերում լուսաբանվեց, որ Աշտարակ քաղաքի Պռոշյան, Պետրոյան, Թաղիադյան, Ղափանցյան, Տերյան, Բեկնազարյան փողոցներն անցել են 17-ժամյա ջրամատակարարման՝ նախկին 6-ժամյայի փոխարեն: Սրանից բացի, լուսաբանվեց, որ տարվա սկզբից Աշտարակում սկսված մեծածավալ ջրաշինարարական աշխատանքների արդյունքում քաղաքում կառուցվել է ընդհանուր հաշվով 3,5 կմ ջրագիծ: Հանրային կապերի ծառայությունն անդրադարձավ նաև Արարատի մարզի Արաքսավան համայնքը սնող 7350 գծամետր ջրագծի ու ներքին ցանցի ավարտական աշխատանքներին, Խարբերդ գյուղի 27, 28, 29 փողոցների համար կառուցվող 1300 գծամետր ջրագծի կառուցման աշխատանքներին, ինչպես նաև Գյումրիում բակային պոմպակայանների արդիականացման ծրագրին: Այստեղ 49 շենքի համար փոխարինվել է 24 պոմպ, որի արդյունքում նախկին 6-8 ժամվա փոխարեն շենքերի հարյուրավոր բնակիչներ ունեն 18-19-ժամյա կանոնավոր և բարձր ճնշմամբ ջրամատակարարում:

Արդեն Ջրի համաշխարհային օրվա առիթով, այս բոլոր թեմաների վերաբերյալ Հանրային կապերի ծառայությունը պատրաստեց համառոտ մամուլի հաղորդագրություն և ուղարկեց 60-ից ավելի լրատվամիջոցների: Ինչպես նաև, օրվա առիթով Կենտրոն և Ֆրի նյուզ հեռուստաալիքների հետ պատրաստեց համակարգում ընթացող աշխատանքների մասին ընդարձակ ռեպորտաժներ:

Ամսվա կարևորագույն իրադարձություններից էր նաև Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի «Հացառատ» աղբյուրների սանիտարական գոտում Ընկերության գլխավոր տնօրեն Մարիաննա Շահինյանի և ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Օլիվիե Դրկոտինյիի ուղեկցությամբ Ֆրանսիայի Ազգային Ժողովի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի պատգամավորների հանդիպումը: Բարեկամ երկրի պատգամավորներին տիկին Շահինյանը ներկայացրեց «Վեոլիա Ջուր» ընկերության

վերջերս գործարկած հերթական՝ բացառապես սեփական կարիքների համար կառուցված արևային էլեկտրակայանը: Հանդիպման ամբողջ ընթացքը տեսանյութերով և լուսանկարներով լուսաբանվեց ընկերության ֆեյսբուքյան և պաշտոնական կայքէջերում:

Ամսվա մյուս աշխատանքները լուսաբանելիս Հանրային կապերի ծառայությունը փորձել է ցույց տալ համակարգը որպես դինամիկ զարգացող կառույց: Լուսաբանվել է Արարատի մարզի Դիտակ գյուղում 90 գծամետր ջրագծի վերակառուցման աշխատանքները, վթարի վերացման աշխատանքներ Երևանի Շենգավիթ և Կենտրոն վարչական շրջաններում, Քասախի կիրճում, Վարդենիսում, Սարուխան գյուղում, Վանաձորում, Մրգավանում, Բալահովիտում և հանրապետության մյուս բնակավայրերում: Առավել խոշոր՝ «Արգել» և «Արտաշավան-Սաղմոսավան» ջրատարաների վթարներին Հանրային կապերի ծառայությունը անդրադարձել է մի քանի անգամ՝ ցույց տալով տվյալ բնակավայրերի ջրամատակարարումը վերականգնելուն ուղղված Վեոլիաթիմի կատարած աշխատանքը նույնիսկ ոչ աշխատանքային օրերին:

Ինչպես յուրաքանչյուր ամիս, հաշվետու ամսում ևս անդրադարձ է եղել ապօրինությունների դեմ պայքարին և կոյուղատար համակարգում ընթացող ամենօրյա աշխատանքներին:

Մարտ ամսին ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով Ընկերությունը շնորհավորել է Կանանց տոնը, Ջրի համաշխարհային օրը, ինչպես նաև տեղեկատվական հրապարակումներ են եղել 1-85 հեռախոսային կենտրոնի աշխատաժամերի և Էրեբունի 5 հասցեում վերաբացված Բաժանորդների սպասարկման գրասենյակի մասին: Շատ են եղել նաև հրապարակումներ ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, թափուր աշխատատեղերի, վթարային ու պլանային ջրանջատումների մասին:

# ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

## 5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- Հիմք ընդունելով Առողջության և անվտանգության Պայմանագրի պահանջը՝ Ընկերության Հյուսիս և Հարավ Շահագործման տնօրինություններում շահագործման տեղամասերի պետերի կողմից իրականացվեցին Վեոլիա Գրուպի Կյանքը փրկող կանոնների վերաբերյալ հանդիպում/քննարկումներ՝ թվով 145 աշխատակցի հետ:
- Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովման մակարդակի շարունակական բարձրացման, աշխատանքների կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանման անհրաժեշտությունը, Բաժինը, Ընկերության Երևան Շահագործման տնօրինության Ղեկավար անձնակազմի (Շահագործման տեղամասերի պետերի, աշխատանքային խմբերի ղեկավարների, Ջրամատակարարման և Ջրահեռացման բաժնի պետերի) թվով 20 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները:
  - Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
  - Վեոլիա Գրուպի «Փոսորակների և խրամուղիների մշակման աշխատանքներ» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
  - «ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների դերը և նշանակությունը»,
  - «Շինհրապարակների անվտանգ կազմակերպման պահանջներ» թեմաներով դասընթաց:

- Ընկերության Հարավ Շահագործման տնօրինության թվով 48 աշխատողի և Հյուսիս Շահագործման տնօրինության թվով 157 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 5 մոդուլից բաղկացած առկա դասընթացները:
  - Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
  - Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ բարձրության վրա» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
  - Վեոլիա Գրուպի «Վտանգավոր էներգիայի վերահսկում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
  - «ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների դերը և նշանակություն»
  - «Շինհրապարակների անվտանգ կազմակերպման պահանջներ» թեմաներով դասընթաց:



*2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ*




*2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ*



## 5.2. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

■ Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 17 քլորակայանում, թվով 8 պոմպակայանում և 2 ՕԿՋ-ում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

■ ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 67 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման՝ մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

*2024 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների*




## 5.3. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

■ Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և ելնելով համակարգերում տեխնածին վթարների կանխարգելմանն և բացառմանն, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված փորձագիտական ընկերության կողմից իրականացվեց թվով 2 քլորակայանի տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ:

## 5.4 ՎԵՈԼԻԱ ԳՐՈՒՊԻ ԲՌԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ, ՆՈՐ ԲՌԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

■ Հաշվետու ամսում իրականացվել են Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ Բարձրության վրա» նոր խմբագրության Բարձր Ռիսկերի կառավարման ստանդարտի հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքներ:

- Հաշվետու ամսում իրականացվել է Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ Բարձրության վրա» նոր խմբագրության Բարձր Ռիսկերի կառավարման ստանդարտի ինքնագնահատման աշխատանքներ:

## 5.5. ԱՊՄ-ՆԵՐԻ ԵՎ ԿՊՄ-ՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Բաժինը, հաշվի առնելով ինժեներատեխնիկական անձնակազմերի կողմից իրականացվող գործառույթների բնույթը, դրանց կատարման ընթացքում ի հայտ եկող հնարավոր վտանգները և վերջինիս հետ կապված ռիսկերը, հիմք ընդունելով ՀՀ գործող ստանդարտների և Գրուպի ԲՌԿ Ստանդարտների պահանջները, հաշվետու ամսում Ընկերության վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավված աշխատակիցներին է տրամադրվել Պաշտպանիչ երկարաճիտ ռետինե կոշիկ, Ջրապաշտպան ռետինե արտահագուստ/OZK):
- Վթարավերականգնողական աշխատանքների անվտանգ կատարման նպատակով Ընկերության Շահագործման տնօրինություններին տրամադրվել է թվով 3 կոմպլեկտ պաշտպանիչ հենապատեր:
- ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների ձեռքբերման գործընթացը շարունակական է, և այդ առնչությամբ պարբերաբար իրականացվում են կարիքների գնահատում և անհրաժեշտ քանակների ձեռքբերում:

## 5.6. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ

- Համաձայն Երևանի քաղաքապետի 22.12.2023 թվականի՝ «Երևան քաղաքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2024 թվականի հիմնական միջոցառումների պլանի և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, 2024թ-ի մարտի 1-ին, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում, Ընկերության ԿՄԿ և ՋՍ վարչության աշխատակիցները՝ ՈԱԱ բաժնի համակարգմամբ, մասնակցեցին «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով հատուկ ցուցադրական տակտիկական ուսումնավարժությանը:

## 5.7. ՎԵՈԼԻԱ ԳՐՈՒՊԻ ԵՎ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

- «Առողջության և Անվտանգության» պայմանագրի առաջին կետով և Վեոլիա Գրուպի ընթացակարգերով սահմանված պահանջներով, Ընկերության ղեկավար անձնակազմի կողմից՝ եռամսյակը մեկ անգամ, Ընկերության հիդրոտեխնիկական կառուցվածքներում, Վթարավերականգնողական աշխատանքների իրականացման վայրերում, Վարչական շենքերում և Ընկերության այլ տարածքներում անհրաժեշտ է իրականացնել անվտանգության ստուգայցեր և ստուգայցերի վերաբերյալ ներկայացնել զեկույցներ՝ արձանագրված թերությունների շտկման/վերացման նպատակով:
- Առաջին եռամսյակի համար սահմանված էր թվով 9 ստուգայց/զեկույց՝ իրականացվել է 100 տոկոսով:
- «Առողջության և Անվտանգության» պայմանագրի երկրորդ կետով և Վեոլիա Գրուպի ընթացակարգերով սահմանված պահանջներով, Շահագործման տեղամասերի պետերի կողմից՝ Վեոլիա Գրուպի Կյանք փրկող կանոնների վերաբերյալ, Շահագործման տեղամասերի աշխատողների հետ 2024 թվականի ընթացքում, եռամսյակը մեկ անգամ անհրաժեշտ է կանոնների վերաբերյալ անցկացնել հանդիպում/քննարկում և քննարկված կանոնների շրջանակում աշխատակիցներին ներկայացված հրահանգների, ցուցումների և քննարկված հարցերի վերաբերյալ ներյայացնել զեկույց:
Առաջին եռամսյակի համար սահմանված էր թվով 20 զեկույց՝ իրականացվել է 100 տոկոսով:
- «Առողջության և Անվտանգության» պայմանագրի երորրդ կետով և Վեոլիա Գրուպի ընթացակարգերով սահմանված պահանջներով, Ընկերությունը 2024 թվականի ընթացքում պետք է իրականացնի նոր խմբագրության թվով 5 ԲՌԿ ստանդարտի ինքնագնահատման աշխատանքներ:
Աշխատանքները իրականցվում են ըստ սահմանված ժամանակացույցի:
- «Առողջության և Անվտանգության» պայմանագրի չորրորդ կետով և Վեոլիա Գրուպի ընթացակարգերով սահմանված պահանջներով, ՈԱԱ բաժնի և ընկերության ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից 2024 թվականի ընթացքում պետք է արձանագվեր թվով 100 գրեթե պատահար և Hi Po:
Առաջին եռամսյակի համար սահմանված էր թվով 25 գրեթե պատահար և Hi Po՝ իրականացվել է 100 տոկոսով:

VEOLIA
Ջուր

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Արոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.Երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am